

3142

491 · 99
34-27

2304-10

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ

ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

431.99

3Q-27

ԹԵՏՐԱՍ

ՅԵՐԵՎԱՆ

1934



09.07.2013

ԱՀԱՅԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ժողովրդի կյանքի զարգացման հետ այդ ժողովրդի գիրն ու գրականությունն ել իր զարգացման պրոցեսներն ունի: Հայկական գիրն ել ունի իր զարգացման պատմությունը. նա հաճախ արմատական փոփոխության և յենթարկվել՝ համաձայն տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական պահանջների: Հայկական մերոպյան գրերը, մեծ մասամբ ճեավորված լինելով ըստ հին հունական գրերի, ինչպես և լատինականը, մինչեւ X դարը զարդանում եյին կլորածե՝ նման լատինական տառերին: Տասերորդ դարում մագաղաթն այլևս չեր բավարարում աճող գրականության պահանջներին, ուստի հրապարակ և գալիս թուղթը: Սակայն նախնական թղթի հատկությունները չեյին համապատասխանում այդ ժամանակաշրջանում դործածվող փետրագրչին, վորովհետեւ գրելու ժամանակ փետրագրչի ծայրերը լցվում եյին թղթի մազուկներով և այսպիսով կլորածե գրերը հնարավորություն չեյին տալիս մաքուր գրելու: Հենց այս հանգամանքն է, վոր, ամենայն հավանականությամբ, գլխավոր պատճառ և դառնում կլորածե գրերն ուղղահայաց դարձնելու, վորով գրերը հարմարեցվում են մագաղաթից ավելի եժանադին նյութին՝ թղթին: Կյդ ժամանակաշրջանից սկսած կլորածե տառերը դառնում են ուղղահայաց անկյունավոր:

Դրանից հետո սկսվում է գրերի խոշոր փոփոխությունների մի պրոցես, վորը վերջիվերջո մեսրոպյան տառերի հետքն անդամ չի թողնում. որինակի համար կարելի յեւ հիշատակել Ռ տառը. սա ժամանակին կազմված է յեղել յերկու «Ռ» տառերից՝ միացած իրարու. վերջիններիս ներքեկի մասը կտրվել է մինչեւ կտուցը և մնացել է միայն վերեկի մասը, վորով և տառի տեսքը դարձել է մեսրոպյանից միանգամայն տարբեր: Այսպես ենակ «Ի» տառը, վորի ձախ կողմի ամբողջ յերկար մասը կտրվել է և մնացել է միայն կտուցը և տառի ձեռվ, վորպիսին, ինչպես տեսնում ենք, յերբեք չի կարող հիշեցնել նախկին մեսրոպյան Ի-ի տառապատկերը: Այսպես փոխվել են շատ տառեր և պահվել միայն նրանց հնչյունները, ինչպես ձ, ղ, մ, ն, չ, պ, ջ, տ, ց, փ տառերը: Մինչև տասներկուերորդ դարը մենք չենք ունեցել հատուկ Օ տառը, որան փոխարինել են յերկու միացած տառերաւ, վորը տվել է Օ հնչյունը: Այսպիսի կոմբինացիան առաջ է բերել մեծ անհարմարություն, վորի համար տասներկուերորդ դարում ընդունվել և լատինական կլոր Օ տառն՝ առանց վորեւ փոփոխության:

1512 թ. հրապարակ են գալիս նոտրագրերը՝ հայկական միջավայրից շատ հեռու՝ ջուղայեցի վաճառականների ձեռքով, առևտրական կապիտալի զարգանալու միջոցին. վաճառականները միակ սոցիալ-իրավական ուժն եյին ներկայացնում հայ իրականության մեջ և առաջին հերթին հենց նրանց պահանջներին եյին բավարարում գրության ձեր փոփոխությունները: Այդ գրերը համարյա թե անփոփոխ

մնացին մինչև «խոջայական» կապիտալի վախճանը: 1850 թ. Գ. Այ-
վազովսկին և ծ. Արամյանը Փարիզի տպարաններից մեկում բացում
են հայկական գրաշարանոց, ուր, ի միջի այլոց, տպագրվում են նաև
դ. Այվազովսկու խմբագրությամբ հրատարակվող «Մասյաց Ավաղնի»
հանգեսը: Նրանք նվիրվելով տպագրական գործին՝ ձեռնարկում են
հայկական տառերի բարեփոխմանը. վերացնում են տառերից հիմնա-
կան թերությունները, փորոնք չափազանց թանդացնում ու բարդաց-
նում ելին շարժածքը: Բարեփոխության հիմնական կետերը հետե-
լյաներն եյին.

ա) զ, ը, ւ, ւ, շ, չ, չ, ջ, վ պոչավոր տառերի պոչերի գդալի կրծատում:
բ) Ծոցագրերի խսղառ վերացում:

դ) Տառերն ուղղահայաց դարձնելը և մասամբ կլորաձև տալը:

1856 թ. Գ. Այվազովսկին տեղափոխվեց Թիֆլիս և այնտեղ շա-
րունակեց հրատարակել իր հանդեսը. դեռ այդ ժամանակ նա մեր
տառերի մասին հետեւյալ դիտողություններն են արել. «Հայերեն տա-
ռերի ուղղահայաց չեն, հայերեն տառերը գրեթե ամբողջովին գուրկ
են յեվրոպական տառերի կլորությունից, բառակուսի յեն և այդ
պատճառով ել չափից դուրս միակերպություն ունեն, վորի շնորհիվ
շուտ են ճանձրացնում ընթերցողներին»: Նա միենույն ժամանակ գան-
գառ և հայտնում, վոր իրեն «քամբասում» են, վորի պատճառով
ստիպված են լինում հետ նահանջել իր ընդհանուր բարեփոխության
ծրագրից, միայն չղիծելով ծոցագրերի փոփոխության հարցում: Այդ
ժամանակները ծ. Արամյանն ել է գանդատվում, բայց հետո շարու-
նակում ե իր «հանդուգն» աշխատանքները: Չորս գծերի միջուկը
լայնացնելով՝ տառերին տալիս ե կլորաձև զծեր, կատարում ե միքա-
նի տառերի նոր դասավորություն՝ թ-թ, չ-ն, չ-ջ, ք-ք, բ-ր, և
նույնիսկ տառապատկերների փոփոխություններ՝ հ-հ, ճ-ճ, ն-ն,
տ-տ: չ-չ, Ակզրնական շրջանում յերկար տարիներ հոգեռականների
կողմից այս բարեփոխությունը դիմադրության եր հանդիպում, իսկ
ներկայիս Արամյանի ճեւափոխված տառանիշները համարվում են ա-
մենաւայր: Տառերի զարգացումը դեպի նրություն, կատարելագոր-
ծում ու ճոխություն՝ մի ընդհանուր յերևույթ ե, շաղկապված տիրող
դասակարգի ճգումների և շահերի, ինչպես նաև տվյալ ժամանակա-
շրջանի տեխնիկական հնարավորությունների հետ: Իհարկե, պահպա-
նողական հոգերանությունը դիմադրում ե յուրաքանչյուր նոր յերե-
փութի, բայց նորը մեջտեղ և զալիս և ավելի բաղմակողմանի կեր-
պով իր պահանջներն ե դնում: Այսպես ե յեղել նաև հայկական տա-
ռերի բարեփոխության ասպարիզում:

Ներկայումս միջազգային տառերի մեջ ամենակատարելագործվա-
ծը՝ տառերի գծագրության և դասավորության տեսակետից, համար-
վում են լատինական տառերը, վորոնք ունեն մշակման չորս հարյուր
տարվա պատճենություն և անգամ այժմ ել հաճախակի յենթարկ-
վում են փոփոխության՝ համաձայն ժամանակակից տեխնիկայի ու
տեսողության պահանջների: Վաթսունական թվականներին ուսուական

շրիփտն ել ընդունեց լատինական գծագրություն, վորի չնորհիվ
այժմս հեշտությամբ ընդորինակվում են լատինական տառերի նոր
ձեռերը և տառերի ձեռերն առանց մեծ ծախքերի միջտ թարմ են
պահվում: Հայկական տառերն ել հեշտությամբ յենթարկվում են
լատինական տառերի գծագրության ու դասավորության, ուստի մենք
կո կարող ենք հեշտությամբ, առանց մեծ ծախքերի, ոգտվել յելքո-
պական տառերի գարնիտուրներից՝ պահելով մեր շրիփտը միջտ թարմ
վիճակում:

Հայկական տառերի հիմնական թերություններն ամփոփում եմ
հետեւյալ կերպով:

1-ին՝ մեր տառերն անկյունավոր, քառակուսի յեն և զուրկ յեվ-
րոպական տառերի կլորությունից ու նրանց գծագրությունից, միա-
պաղաղ են և այդ պատճառով խառնում են տեսողությունը և շուտ
հոգնեցնում, միենույն ժամանակ լայն տարածություն գրավում և
տեսողությունից ավելորդ եներդիմա խլում:

2-րդ՝ մեր տառերի մեծ մասը, դուրս գալով իրենց բնից, կազ-
մում են մազային գծերով պոչեր և ատամներ ու գրանով Ել ավելի
բեռնավորում աչքի եներդիման:

3-րդ՝ չնորհիվ մասամբ տառերի անկանոն դասավորության՝ չորս
գծերի մեջ, հաճախ ընթերցողը չփոթում է տառանիշները և աչքի
կենարունացած լարում առաջ բերում:

4-րդ՝ մեր տառերի անկանոն դասավորությունը չորս գծերի
մեջ՝ արգելք է հանդիսանում տողերի դյուրին ընդգրկմանը և նպաս-
տում աչքերի շուտ խառնվելուն և զանդաղ ընթերցանության:

5-րդ՝ բացի մեր տառերի թերությունից, նրանց գծագրությունն
ել չափազանց միտպաղաղ և զուրկ զանդաղ նուրբ գծերից ու շուտ
ե ճանձրացնում ընթերցողին

6-րդ՝ մեր յեռամատ ա-ն, վոր չափազանց անկյունավոր և լայն,
յուր շատ խոշոր շրջանառության չնորհիվ խոշոր տեղ և գրավում,
ընթերցողին հոգնեցնում ու ճանձրացնում և և նույնիսկ պատճառ
դասանում աչքի փչացման:

Այժմ անցնենք մեր տառերի պատճառած տնտեսական վնասնե-
րին: Ինչպես հայտնի յե, բոլոր տառերը դասավորված են չորս գծե-
րի մեջ. միջին յերկու գծերի մեջ յեղած տառերն ավելի ապահովված
են կոտրատվելուց, վորովհետեւ վերեկից և ներքեկից ունենալով լու-
սանցքներ՝ գրեթե մի ընդհանուր միապաղաղ գիծ են կաղմում, և
այսպիսով միջին յերկու տողերի մեջ յեղած տառերը յերկու կողմից
պաշտպանում կոտրատվելուց: Վերեկի կամ ներքեկի գծերի մեջ յեղած
տառերն ապահովված են կիսով չափ, ունենալով միայն մի կողմից
միապաղաղ գիծ, իսկ չորս գծերի մեջ յեղած տառերը, չունենալով
վոչ մի կողմից միապաղաղ գիծ, ավելի շուտ են յենթարկված կո-
տրատվելու և փչանալու: Մեր 35 տառերը հետեւյալ կերպով են դաս-
պարված չորս գծերի մեջ:

4 գծերի մեջ
 Նոր տառերից
 Վերևի 3 գծերի մեջ
 Նոր տառերից
 Միջին 2 գծերի մեջ
 Նոր տառերից
 Ներքեւի 3 գծերի մեջ
 Նոր տառերից

8 տառ թ ի խ կ ջ վ փ Փ
 2 տառ վ փ
 8 տառ ե ժ չ ձ ճ մ ն
 11 տառ ժ լ ծ կ հ ճ ն մ ն ֆ Փ
 5 տառ ա ս տ ո ո
 15 տառ ա դ ե զ ի ը լ ս յ շ ո ս տ ր ո
 14 տառ բ դ դ ը ւ լ դ յ շ է պ ր ք ց
 7 տառ բ զ ր դ պ չ ց

Շնորհիվ տառերի վերոհիշյալ հին դասավորության՝ շատ տառեր յենթակա յեն ավելի շուտ կոտրատվելու. որա վրա ավելանում ե և այն հանդամանքը, վոր տառերի մի մասն ել դուրս են դալիս իրենց բնից՝ կազմելով պոչեր և մաղային գծեր, վորոնք նույնպես յենթակա յեն շուտ կոտրատվելու. այդպիսով ժամանակից շուտ մեր տառերը յենթարկվում են ամորտիզացիայի, վորով անտեղի դումարներ են կորչում:

Դժվար թե մի ուրիշ արթավիտում դանվի այնպիսի խոշոր գործածություն ունեցող տառ, ինչիսին ե մեր յեռամատ ա-ն: Որինակ, ռոռուսական արթավիտում ամենից շատ դործածվող տառեր համարվում են՝ ն, պ, ս տառերը, այդ տառերն ամեն մի հաղար տառի շարվածքի մեջ հանդիպում են մոտավորապես 90 անդամ, իսկ մեր ա-ն 180 անդամ, վորի շնորհիվ ավելի յենք հոգնեցնում աչքներս և մետաղի, թղթի ու տպագրության մեջ 6 տոկոսից ավելի ծախս ունենում: Միայն Պետհրատի Յերևանի տպարանում 1934 թ. նախատեսված պլանով տպագրվում ե 10,500 մամուլ, վորից 6900 մամուլ կազմում են դանազան լրագիրներն՝ իրենց 15—20 հազար տիրաժով, իսկ 3600 մամուլ կազմում են գրքերն ու ժուռնալներն՝ իրենց միջին 10 հազար տիրաժով: Յեթե հաշվելու լինենք միայն տպագրության ու թղթի վերոհիշյալ 6 տոկոսի կորուսը, հետեւյալ պատկերն ենք ստանում. թերթերից կորցնում ենք 414 մամուլ, գրքերից ու ժուռնալներից՝ 216 մամուլ: Այսպիսով մեր ա-ն պատճառում ե միայն տպարանին 630 մամուլի կորուստ:

Յեվրոպական տպագրության մեջ խոշոր տեղ ե գրավում կեդել 8-ի (պետիտ) տառը, իսկ մեզ մոտ 8-ին փոխարինում ե կեդել 10-ի (կորպուս) տառը: Տարբերությունն 8-ի և 10-ի մեջ կազմում ե 40 տոկոս, իսկ մեր կեդել 10-ի տառը, համեմատած յեվրոպական կեդել 10-ի տառի հետ, 10-ից 15 տոկոս ավելի տեղ ե գրավում: Հենց մեր ներկայումս գործածվող տառերի անտնտեսավարական բնույթն և պատճառ, վոր սուսական թերթերից արտատպվող նյութերը մեր մամուլում համարյա թե կրկնակի տեղ են բոնում: Ահա վերոհիշյալ լուրջ պատճառներն ստիպում են, վոր մեր հասարակայնությունն ամենալուրջ կերպով դրավի մեր տառերի փոփության խնդրով:

Այժմ, մեր զբականության ամենաբուռն զարգացման ըլջանում, յեր տարեցտարի հսկայական չափով առաջ ե գնում մեր տպագրության գործը, անհրաժեշտ ե զբաղվել ու հրատապ խնդիր դարձնել տա-

ռերի ձեւափոխությունը և այդպիսով կանխիլ մեր հետագա թե՛ աընտեսական և թե՛ ֆիզիկական կորուսաները: Սույն աշխատությամբ կրկին հասպարաական կույտ այս հարցը, և ժամանակակի ե, վոր նասանաւ իր լուծումը: Այս աշխատանքը, լինելով գործի սկզբունքը, տառեր մշակելիս զեկավարվել եմ հետեւյալ սկզբունքներով:

1-ին՝ աշխատել բարձրացնել տառերի փորակը և այդ վորակի հաշվին չանել խնայողություն:

2-րդ՝ աշխատել տառապատկերները չփոխել:

3-րդ՝ յեռամատ ա-ն փոխարինել յերկմատ ա-ով:

4-րդ՝ տառերին տալ ուղղահայաց ձև:

5-րդ՝ վերացնել անկյունավոր գծերը և տալ կլոր ձև:

6-րդ՝ լայնացնել չորս գծերի միջուկը, վորով կապահովվեն ի միջի այլոց նաև տառերի արանքները մրով լցվելուց:

7-րդ՝ ամեն մի տառ պարփակել իր բնում և ամեն մի տառ դարձնել մի ամփոփ միավոր:

8-րդ՝ տառերը գասավորել համապատասխան չորս գծերի միջն կանոնավոր ձևով, վորպեսզի տողերը դյուրին ընդդրկվեն:

9-րդ՝ մեր 35 տառն ունի 7 հատ հատուկ դիմատառ, մնացած 28 տառը տպագրվում են սովորականի մեծացրած ձևով. վերացնել նաև այդ 7 դիմատառը և զեկավարվել ընդհանուր սկզբունքով:

10-րդ՝ մեր դիմատառ Ա-ն փոխարինել փոքրատառ ա-ով՝ ներս ծալելով աշակողմյան դուրս ցցված ատամը, կամ փոխանակ դիմատառ Ա-ի աջ տաամը ներս ծալելու, վերկի բաց մասը ծածկել, նմանեցնելով հունական արթային, վորը բոլոր յելլոպական լեզուներում ել ո ե՝ մենք ևս, մինչեւ նոտրագրերին անցնելը, գործ ենք ածել այդ ձևի ա:

11-րդ՝ այժմ գործածվող տառերից հանել յեռամատ ա-ն և փոխարինել յերկմատ ա-ով, վորով մենք մեր յերկրի ամբողջական տեսքը կատարելապես փոխվել է: Դեպի լիակատար սոցիալիզմ գնացող մեր աշխատավոր ժողովուրդն իր աշխատանքային խանդավառությամբ հիմնահատակ կործանեց չին կարգերը և նրանց ավերակների վրա մեր կուսակցության սիրելի առաջնորդի զեկավարությամբ ու աջակցությամբ ստեղծեց նորը — իր սեփական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, և կուլտուրայի ու կենցաղի նոր ձևեր: Խոսք չի կարող լինել, վոր այս պատարիզում, մեր տառերի փոփության խնդրում ևս այդ նույն աշխատավոր մասսաները կուսակցության և իշխանության զեկավարությամբ կատարեն այն, ինչ դարձել ե մեր որերի պահանջը, մեր զարգացման ընթացքից բղխող անհրաժեշտությունը:

Խորհրդային կարգերը Հայաստանում այնպիսի պատմական նվաճումներ են ձեռք բերել, վոր այսոր մեր յերկրի ամբողջական տեսքը կատարելապես փոխվել է: Դեպի լիակատար սոցիալիզմ գնացող մեր աշխատավոր ժողովուրդն իր աշխատանքային խանդավառությամբ հիմնահատակ կործանեց չին կարգերը և նրանց ավերակների վրա մեր կուսակցության սիրելի առաջնորդի զեկավարությամբ ու աջակցությամբ ստեղծեց նորը — իր սեփական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, և կուլտուրայի ու կենցաղի նոր ձևեր: Խոսք չի կարող լինել, վոր այս պատարիզում, մեր տառերի փոփության խնդրում ևս այդ նույն աշխատավոր մասսաները կուսակցության և իշխանության զեկավարությամբ կատարեն այն, ինչ դարձել ե մեր որերի պահանջը, մեր զարգացման ընթացքից բղխող անհրաժեշտությունը:

Լ. ՅԱՂՈՒԲՅԱՆ





Լ. ԱԳՍՏՅԱՆ

Реформа арм. шрифта

Гиз. ССР Армении, Эревань, 1934 г.

«Ազգային գրադարան»



NL0238831

